

# ԱԼԵԲՍԱՆԴՐ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ «ԿՏԱԿ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ»-Ի ՄԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ<sup>1</sup>

ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*պատ. գիտ. թեկնածու*

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան  
Երևանի պետական համալսարան  
garnik.harutyunyan@ysu.am*

ՀՏԴ՝ 244; 242

DOI: 10.54503/1829-4278.2024.1-182

## Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է «Կտակ չարչարանաց»-ի ժանրի առավել վաղ ստեղծված խմբագրություններից մեկի հեղինակային պատկանելության ու թվագրման հարցին: Ավագ ուրբաթի առիթով կազմված այս քարոզները առավել մեծ տարածում են ստացել 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած:

Խնդրո առարկա խմբագրությունը հիմնականում ընդօրինակվել է ժողովածուներում: Մաշտոցյան Մատենադարանում դրանց թիվը 13 է: Զեռագրերի մեծ մասում քարոզն անանուն է, այսինքն՝ խորագրում հիշատակում չկա հեղինակի մասին: Գրչագրերի մյուս մասում սակայն, այս «Կտակ չարչարանաց»-ը վերագրվել է Ալեքսանդր Ա Զուղայեցի (1706–1714 թթ.), և Ղազար Ա Զահկեցի (1737–1751 թթ.) կաթողիկոսներին: Ըստ այդմ, ձեռագրացուցակներում նույնպես այն վերագրվել է հիշյալ երկու անձանց, ընդ որում՝ ավելի հաճախ Ալեքսանդր Զուղայեցուն, քան Ղազար Զահկեցուն:

Հոդվածում ցույց է տրվել, որ իրականում գործ ունենք խմբագրության և դրա համառոտված ու խմբագրված տարբերակի հետ: Առա-

<sup>1</sup> Սույն հոդվածի նախնական տարբերակն իբրև զեկուցում ներկայացվել է Բաբկեն Զուգասցյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովում (Երևան, Մաշտոցյան Մատենադարան, 17–18 նոյեմբերի, 2023 թ.):

ջինի հեղինակը Ալեքսանդր վրդ. Զուղայեցին է, իսկ ստեղծման թվականը, ամենայն հավանականությամբ, 1686-ը: Հետաքրքիր է, որ սույն խմբագրությունը, ի տարբերություն «Կտակ չարչարանաց»-ի՝ 18-19-րդ դարերում ստեղծված տարբերակների մեծ մասին բնորոշ արձակ ու չափածո կառուցվածքի, միայն արձակ է:

**Բանալի բառեր.** Կտակ չարչարանաց, Ավագ ուրբաթ, քարոզ, Ալեքսանդր Զուղայեցի, Ղազար Ջահկեցի, Նոր Զուղա, ձեռագիր

«Կտակ չարչարանաց» կամ «Ավագ/Մեծ ուրբաթի քարոզ» և նման խորագիր<sup>2</sup> կրող ձեռագրական միավորների և ընդհանուր առմամբ մեր կողմից առանձնացված «Կտակ չարչարանաց»-ի ժանրի ընթացիկ ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ դրանք մեծ քանակով շարադրվել (խմբագրվել) ու ընդօրինակվել են 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած և հատկապես 18-19-րդ դարերում: Ընդ որում՝ երբեմն մեկ ձեռագրում (հիմնականում ժողովածուներում) կարող է ընդօրինակված լինել այս ժանրի մեկից ավելի նմուշ-քարոզ: Հաշվի առնելով զանազան ձեռագրացուցակներում հայերեն գրչագրերի նկարագրությունների պատկերն այս պահին, սկզբունքների տարբերությունները, առանձնահատկությունները և որոշ այլ հանգամանքներ՝ կարելի է վստահորեն պնդել, որ դրանց վրա հիմնված որևէ քանակական պատկեր ստանալու փորձ, զոնե այս պահին, մոտավոր փոփոխվելիք է լինելու՝ խնդրո առարկա ժանրի նմուշների իրական թվի աճի հավանականությամբ (խոսքը և «Կտակ»-ներ պարունակող ձեռագրերի քանակի մասին է, և միավոր-քարոզների թվի): Բացի «Կտակ չարչարանաց»-ի ձեռագիր ընդօրինակություններից, հատկապես 18-րդ դ. վերջերից մեզ են հասել նաև որոշ տպագիր նմուշներ, սակայն մինչև 19-րդ դ. ստեղծված հեղինակային տարբերակների գերակշիռ մեծամասնությունը դեռևս մնում է անտիպ: Անտիպ մի այդպիսի հեղինակային խմբագրության է նվիրված սույն հոդվածը:

### 17-18-րդ դարերի «Կտակ»-ների հեղինակները

Արդեն 17-րդ դ. երկրորդ կեսից սկսած հայկական միջավայրում «Կտակ չարչարանաց»-ի «տաթնացիական»<sup>3</sup> և «Ճաշոցյան» տարբե-

2 **Հարությունյան Գ.**, Ստեփանոս սարկավագ Տփղիսեցու (Թիֆլիզեցու) «Կտակ սուրբ չարչարանացն Քրիստոսի փրկչին մերոյ» երկը և «Կտակ չարչարանաց...»-ի ժանրը, *Ակադեմիկոս Սեն Արևշատյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր (22-23 մայիս, 2019 թ.)*, Երևան, Մատենադարանի հրատ., 2020, էջ 218:

3 «Կտակ չարչարանաց»-ի հեղինակային երկու խմբագրություններին

րակներից զատ՝ այս ժանրի երկերի հեղինակային տարբերակներ կամ խմբագրություններ են ասպարեզ գալիս, որոնց հեղինակները Հայոց եկեղեցու՝ հիշյալ շրջանի մի շարք նշանավոր, երբեմն էլ ոչ այնքան հայտնի հոգևորականներ են, հետագայում՝ նաև աշխարհականներ: Թեև «Կտակ»-ների մեծ մասի հեղինակային պատկանելությունը կասկած չի հարուցում, սակայն որոշ դեպքերում միևնույն տարբերակի՝ տարբեր հեղինակների վերագրված լինելու հանգամանքը կամ նույն տարբերակի անանուն բազում ընդօրինակությունները կամ նույն խմբագրության՝ իրարից տարբերվող սկսվածքները և նմանօրինակ այլ երևույթներ հուշում են, որ, ամենայն հավանականությամբ, «Կտակ»-ների մի մասը կարող է ընդամենը վերագրված լինել այդ անձանց: 17-18-րդ դարերում ապրած նման գործիչների նախնական մի ցանկ կազմել ենք վերջերս<sup>4</sup>:

Ուշագրավ է, որ այդ գործիչներից շատերը ոչ միայն պարզապես ձանաչել են միմյանց՝ գործելով նույն ժամանակաշրջանում և միջավայրում (մասնավորապես՝ Կոստանդնուպոլսում), այլ նաև հաճախ սերտորեն գործակցել են միմյանց հետ. այդպիսի առնչությունների և դրանց՝ հիշյալ հեղինակների խմբագրած «Կտակ չարչարանաց»-ի տարբերակների վրա հնարավոր փոխազդեցությունների հարցն, իհարկե, ամենակարևորներից է, սակայն վերջնական եզրակացություններ հնարավոր կլինի անել միայն մեր ընթացիկ հետազոտության վերջում: Իսկ մինչ այդ, կարծում ենք, հարկ է պարզել հիշյալ տարբերակների հեղինակային պատկանելության և հարակից հարցերը, ինչպես նաև դիտարկել այդ խմբագրությունների տարբեր առանձնահատկությունները՝ առանձին-առանձին:

---

նվիրված մեր նախորդ հոդվածներում այս «նախնական» տարբերակը վերապահումով ենք կոչել «տաթևացիական»՝ շեշտելով, որ ինքը՝ Ս. Գրիգոր Տաթևացին, իր Քարոզգրքում ներառված տվյալ քարոզի խորագրում շեշտել է «յայլմէ» (այսինքն՝ «ուրիշից») բառը: Արդեն 17-րդ դարից մեզ հայտնի «Կտակ չարչարանաց»-ի տարբերակները, ամենայն հավանականությամբ, ստեղծվել են հենց վերջինի հիմքի վրա՝ նրա ընդարձակմամբ (տե՛ս **Հարությունյան Գ.Ա.**, «Կտակ չարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի քարոզի՝ Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը, *Բանբեր Մատենադարանի*, 33, 2022, էջ 140): Իսկ Գրիգոր Տաթևացին, ըստ ամենայնի, օգտվել է մեկ այլ՝ ավելի նախնական տարբերակից, որի հեղինակային պատկանելության պարզումն առանձին մանրամասն հետազոտություն է պահանջում: Դրան կանդրադառնանք հետագայում:

4 **Յարության Գ.**, «Կտակ չարչարանաց»-ի ժանրի ձեռագրական եւ բնագրային հիմնական առանձնայատկությունները, *Սիոն*, թիւ 8-12 (Օգոստոս-Դեկտեմբեր), Երուսաղէմ, 2023, էջ 360:

## Ձեռագրերը

«Կտակ չարչարանաց»-ի ժանրի նմուշներին բնորոշ բնագրագիտական առանձնահատկություններից է անգամ նույն խմբագրությանը պատկանող ընդօրինակությունների՝ հաճախ սկսվածքով և/կամ վերջավորությամբ միմյանցից զանազանվելու երևույթը<sup>5</sup>։ Նույնը կարելի է ասել նաև խնդրո առարկա տարբերակի մասին, որը, բացի տարբեր հեղինակների վերագրվելուց և ընդօրինակություններում տարբերվող խորագրեր ունենալուց, որոշակի տարբերություններ կարող է ունենալ հիմնականում բնագրի սկսվածքի դեպքում։ Ստորև կդիտարկենք «Կտակ չարչարանաց»-ի մեզ հետաքրքրող տարբերակի՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ Մատենադարան կամ՝ ՄՄ) ձեռագրական հավաքածուի ընդօրինակությունների համապատասխան տվյալները՝ քաղված բուն գրչագրերից։ Նշենք նաև, որ սկզբնապես միավոր-քարոզը գտնելու համար օգտվել ենք մինչ այժմ հրատարակված ընդարձակ և համառոտ ձեռագրացուցակներից, սակայն, հաշվի առնելով բնագրային մանրամասների կարևորությունը, հետագոտել ենք նաև բուն ձեռագրերը և բոլոր տեղերում փորձել միօրինակացնել տվյալները. ներկայացրել ենք ամբողջական խորագիրը (ձեռագրացուցակներում երբեմն կրճատ է), հարկ եղած դեպքում՝ ընդարձակել սկսվածքը և մեծամասամբ ավելացրել բնագրի ավարտական հատվածը<sup>6</sup>։

Այս պահին մեզ հայտնի է Մատենադարանում պահվող 13 ձեռագիր, որոնցում առկա է խնդրո առարկա խմբագրության քարոզ.

1. ՄՄ Հ<sup>տ</sup> 420, ժողովածոյ (Էջմիածին, ԺԸ. դ.) – **114ա-25ա Քարոզ Մեծի ուրբաթին սգոյ, ի բան առաքելոյն, որ ասէ. եթէ Տէր Յիսուս ի գիշերի յորում<sup>7</sup> մատնիւր, էառ զհաց, զոհացաւ, երեկ և ասէ՝ Առէք, կերայք, այս է մարմին իմ, վասն ձեր բաշխի, զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն և այլն։ Կտակ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց ասացեալ<sup>8</sup> – [Կ]անխաճառութիւնք մարգարէից, որ վասն կամաւոր և**

5 Ժանրի նմուշների այս և այլ առանձնահատկությունների մասին տե՛ս **Յարութիւնեան Գ.**, «Կտակ չարչարանաց»-ի ժանրի..., էջ 359–367։

6 Ձեռագրի տվյալներից բացի՝ հղել ենք նաև Մատենադարանի ընդարձակ ձեռագրացուցակի տվյալ հատորի համապատասխան էջը, այլ դեպքում՝ համառոտի հասցեն։ Անանուն տարբերակների՝ այս կամ այն հեղինակին վերագրումները հիմնականում պահել ենք, ինչպես որ կան ձեռագրացուցակների նկարագրություններում։ Ձեռագրերի գրության տեղի և թվականի տվյալները ևս ձեռագրացուցակներից են, ըստ հարկի՝ մեր ծանոթագրություններով։

7 Նկարագրության մեջ՝ «յիւրում»։

8 Վերջին նախադասությունը գրված է մեկ տողի վրա, խորագրից ավելի խոշոր

սարսափելի չարչարանացն, ահաոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն՝:

2. ՄՄ Հ<sup>մ</sup> 1103, ժողովածոյ (ԺԷ. դ.) – 165թ–93ա Քարոզ Մեծի ուրբաթուն սգոյ, ի բանն առաքելոյն Պողոսի որ ասէ. Եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնիւր, էառ հաց, գոհացաւ, երեկ, ետ նոցա և ասէ՝ Առէք, այս է մարմին իմ, զայս արարէք առ իմոյ յիշատակի, քանիցս անգամ թէ ուտիցէք զհաց և զ՝(այսչափ – Գ. Հ.) – 166ա [Կյանխաձառութիւնք<sup>10</sup> մարգարէից, որ վասն կանաւոր և սարսափելի չարչարանացն, ահաոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կատարեցան... 192թ յերկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարելոյն, խաչելոյն, թաղելոյն և յարուցելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ [193ա] Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն՝:

3. ՄՄ Հ<sup>մ</sup> 1390, ժողովածոյ (Նոր Զուղա, 1666 թ.<sup>12</sup>/1686 թ. հետո) – 347ա–62բ Քարոզ Մեծի ուրբաթուն սգոյ, ի բանն առաքելոյն Պողոսի, որ ասէ. Եթէ Տէր Յիսուս ի գիշերին, յորում<sup>13</sup> մատնիւր, էառ հաց, գոհացաւ, երեկ ետ նոցայ, եւ ասէ. Առէք, այս է մարմին իմ, զայս արարէք յիշատակի, քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս և զ՝(այսչափ – Գ. Հ.)<sup>14</sup> – Կանխաձառութիւնք մարգարէիցն, որ վասն կա-

բոլորգրով, կարմիրով:

9 ՄՄ 420, 114ա, 125ա, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան, Ա. Քէօշկերեան, խմբ.՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դերիկեանի), հտ. Բ., Երևան, «Նաիրի» հրատ., 2004, էջ 482:

10 Նկարագրության մեջ վրիպմամբ՝ «[Կյանխաձառութիւնք»:

11 ՄՄ 1103, 165թ–6ա, 192թ–193ա, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (կազմ.՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սոփիասեան, Յ. Քեօսէեան, խմբ.՝ Փ. Անթարեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմ.՝ Վ. Դերիկեանի), հտ. Դ., Երևան, «Նաիրի» հրատ., ԵՊՀ հրատ., 2008, էջ 319:

12 Նկարագրության մեջ 1666 թիվը նշված է իբրև գրչության թվական ամբողջ ձեռագրի համար, սակայն, ինչպես կոտեսենք ստորև, մեզ հետաքրքրող միավորը չէր կարող գրվել 1686 թվականից առաջ: Բացի դրանից՝ գրչագրի մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թերթ 347–ից սկսած գործ ունենք այլ ձեռագրի հետ (գրված այլ թղթի վրա, ակնհայտորեն այլ ձեռքով և այլն), որը հետագայում կցվել է առաջին մասին. ցավոք, այս ամենն ընդարձակ նկարագրության մեջ արտացոլված չէ: Այնպես որ, կարծում ենք, ձեռագրի այս մասը գրվել է հավանաբար 17–րդ դ. վերջում (1686–ից հետո) կամ 18–րդ դ. սկզբներին, այլ (Անանուն Բ.) գրչի ձեռքով:

13 Նկարագրության մեջ՝ «յուրում»:

14 Ձեռագրի նկարագրության մեջ ավելացվել է նաև «արարեալ տեառն Ղա–

մատր եւ սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կարարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն<sup>15</sup>:

4. ՄՄ Հ<sup>մ</sup> 1755, ժողովածոյ (ԺԸ. դ.) – 83ա–101բ [Աղէքսանդրի Զուղայեցոյն] Կտակ Մեծի ուրբաթին, յոյժ գեղեցիկ, ի բան առաքելոյն Պետրոսի, որ ասէ. Քրիստոսի չարչարիլն մարմնով՝ վասն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք – Կանխաձառութիւնք մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կարարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն<sup>16</sup>:

5. ՄՄ Հ<sup>մ</sup> 1842, ժողովածոյ (Լիւմ անապատ, 1771 թ.) – 193ա–7բ, 205ա–10բ Կտակ Մեծի ուրբաթու, ի բանն առաքելոյն Պետրոսի, որ ասի. Քրիստոսի չարչարիլն մարմնով վասն ձեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք, զի որ չարչարի մարմնով, դադարի ի մեղաց, Պետրոսն – Նախաձառութիւնք մարգարէից, որ վասն կամաւոր եւ սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կարարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ, չարչարեցելոյն, խաչեցելոյն, զթաղեցելոյն և յարուցելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Հոգոյն Սրբոյ, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն<sup>17</sup>:

6. ՄՄ Հ<sup>մ</sup> 2082, Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան (Շօշ [Սպահան], 1686 թ.) – 251ա–264ա [Աղէքսանդրի կաթողիկոսի] Քարոզ Մեծի ուրբաթուն սգոյ, ի բանն առաքելոյն Պօղոսի, որ ասէ. Եթէ Տէր Յիսուս ի գիշերին, յորում մատնիւր, էառ հաց, զոհացաւ, երեկ, ետ նոցա եւ ասէ. Առէք, այս է մարմին իմ, զայս արարէք առ

զարու սրբազան կաթողիկոսի.» արտահայտությունը՝ միավորի խորագրում, «ի վերին լուսանցս շղագրով» բացատրությամբ: Սակայն հարկ է շեշտել, որ այն ակնհայտորեն հետագայի հավելում է, ընդ որում՝ ամբողջական տեքստը չէ և ունի շարունակություն: Այդ պատճառով մենք այն միավոր–քարոզի խորագրում չենք հավելել. այս նշում–գրությամբ կանոնադրականք հաջորդիվ:

15 ՄՄ 1390, 347ա, 362բ, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Դ...., էջ 1142:

16 ՄՄ 1755, 83ա, 101բ, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Օ. Եգանեան, խմբ.՝ Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քի. Հայրապետեանի, ցանկերը կազմ.՝ Վ. Դեմիրճեանը), հտ. Ե., Երևան, «Նաիրի» հրատ., ԵՊՀ հրատ., 2009, էջ 1097:

17 ՄՄ 1842, 193ա, 210բ, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր–Վարդանեանի), հտ. Զ., Երևան, «Նաիրի» հրատ., 2012, էջ 151:

**իմոյ յիշատակի, քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս և զ**”(այսչափ – Գ. Հ.) – *Կանխաձառությունը մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն*<sup>18</sup>:

7. ՄՄ Հ<sup>տ</sup> 2269, ժողովածոյ (ԺԸ. դ.) – 98ա–114բ [Ալեքսանդրի Զուղայեցոյ] **Կտակ Մեծի ուրբաթին յոյժ գեղեցիկ. ի բանն առաքելոյն՝ Պետրոսի՝ Քրիստոսի չարչարիլն մարմնով վասն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք** – *Կանխաձառությունը մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն յափտեան և յափտեանս յափտենից. ամէն*<sup>19</sup>:

8. ՄՄ Հ<sup>տ</sup> 2715, ժողովածոյ (ԺԹ. դ.) – 158ա–66բ **Քարոզ Մեծի ուրբաթուն սգոյ՝ ի բանն առաքելոյն՝ Պօղոսի, որ ասէ, եթէ՝ Տէր Յիսուս ի գիշերին, յորում մատնիւր, էառ հաց գոհացաւ, երէկ և ետ նոցա և ասէ՝ Առէք՝ այս է մարմին իմ, զայս արարէք յիշատակի քանիցս անգամ, եթէ ուտիցէք զհացս, ևն (=և այլն) [Ա. Կորնթ., ԺԱ. 23, 26]** – *Կանխաձառությունը մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յայսմ աւուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն*<sup>20</sup>:

9. ՄՄ Հ<sup>տ</sup> 2820, ժողովածոյ (ԺԸ. դ.) – 84ա–91բ [Ալեքսանդրի Զուղայեցոյ. Քարոզ Մեծի ուրբաթուն սգոյ, ի բանն առաքելոյն՝ Պօղոսի, որ ասէ. եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնիւր, էառ հաց, գոհացաւ, երէկ ետ նոցա եւ ասէ՝ Առէք, այս է մարմին իմ... *տէն ձեռ. 1103, 165բ–93ա*] – *Կանխաձառությունը մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն ահաւոր <ահաւոր> և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն*<sup>21</sup>:

18 ՄՄ 2082, 251ա, 264ա, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. 2...., էջ 1425:

19 ՄՄ 2269, 98ա, 114բ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Է., Երևան, «Նայիրի» հրատ., 2012, էջ 728:

20 ՄՄ 2715, 158ա, 166բ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Թ., Երևան, «Նայիրի» հրատ., 2017, էջ 138–139:

րեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Սուրբ Հոգոյն, յափտեանս յափտենից. ամէն՝<sup>21</sup>:

10. ՄՄ Հ<sup>մ</sup> 2980, Յակոբ Նալեան, Մեկնութիւն եօթն խորհրդոց եկեղեցոյ ([Կոստանդնուպոլիս], 1764 թ.) – 429ա – 41ա **Կտակ Մեծի ուրբաթի, ի բանն առաքելոյն Պետրոսի, որ ասէ. Քրիստոսի չարչարիւն մարմնով վասն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք, զի որ չարչարի մարմնով՝ դադարէ ի մեղաց**<sup>22</sup> – Կանխաձառութիւնք մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ աւուր լցեալ կարարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իւրոյ և Հոգոյն Սրբոյ յափտեան և յափտեանս յափտենից. ամէն՝<sup>23</sup>:

11. ՄՄ Հ<sup>մ</sup> 3304, Ժողովածոյ (ԺԸ. դ.) – 215բ–30բ **Քարոզ Մեծի ուրբաթին սգոյ, ի բան առաքելոյն Պօղոսի, որ ասէ Առաջին Կորնթացացն ԺԱ. 24. (=23). Եթէ Տէր Յիսուս ի գիշերին, յորում մատնիւր, էառ հաց, գոհացաւ, երեկ և ասէ՝ Այս է մարմին<ին> իմ, զայս արարէք առ իմոյ... առէք և կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի, զայս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթերցացն և այլն** – Կանխաձգութիւնք մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յայսմ յաւուր լցեալ կարարեցան... ծերք և փղայք, հարուստք և աղքատք, մեծամեծ և փնանկք՝ ամենեքեան ի մի բերան փառաբանութեամբ օրհնել զփրկիչն/// (Հար. թափուած – Գ. Հ.)<sup>24</sup>:

12. ՄՄ Հ<sup>մ</sup> 3830, Ժողովածոյ (Կ. Պօլիս, 1780 թ.) – 109ա–22ա **Կտակ Մեծի ուրբաթու, ի բանն առաքելոյն Պետրոսի, որ ասէ. Քրիստոսի չարչարիւն մարմնով վասն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք, զի որ չարչարի մարմնով, դադարէ ի մեղաց** – Նախաձառութիւնք մարգարէիցն, որ վասն կամաւոր և սարսափելի չարչարանացն, ահա-

21 ՄՄ 2820, 84ա, 91բ, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Թ..., էջ 786: Ձեռագրում խորագիրը բացակայում է, վերականգնումը՝ ըստ ընդարձակ նկարագրության:

22 Արտաքին աջ լուսանցում գրչի ձեռքով գրված է՝ «Ա. Պոս., Դ. Ա.», որը պետք է հասկանալ որպես բնաբանի հղում և կարդալ՝ «Պետրոս առաքյալի Առաջին ընդհանրական թուղթ, Դ. գլուխ, 1-ին համար»:

23 ՄՄ 2980, 429ա, 441ա, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Թ..., էջ 2041–2042:

24 ՄՄ 3304, 215բ, 230բ, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր–Վարդանեանի), հտ. Ժ., Երևան, 2019, էջ 1257: Այս ձեռագրում «Կտակ»-ը վերջից թերի է. բովանդակությունից ելնելով՝ ամենայն հավանականությամբ 230–1 թերթերի միջև մեկ թերթ պակասում է, իսկ 231ա էջից արդեն այլ միավոր է սկսվում (ձեռագրի ընդարձակ նկարագրության մեջ այս մասին ցավոք հիշատակում չկա):

տր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յայսմ ատուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն, յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իրոյ և Հոգոյն Սրբոյ, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն<sup>25</sup>:

13. ՄՄ Հ<sup>մ</sup> 7246, ժողովածոյ (Աստուածածնայ ուխտ (Կարմիր վանք), Կ. Պօլիս, 1741-1747 թթ.) – 170ա-83ա **Կտակ Մեծի ուրբաթի, ի բանն առաքելոյն Պետրոսի, որ ասէ. Քրիստոսի չարչարիլն մարմնով վասն ձեր և դուք ի նոյն միտս վառեցարուք, զի որ չարչարի մարմնով, դադարէ ի մեղաց. 1 Պետրոս, Գ<sup>26</sup> 1** – Կանխաձառութիւնք մարգարէիցն, որ վասն կանաւոր և սարսափելի չարչարանացն, ահաւոր և անմահարար մահուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յայսմ ատուր լցեալ կատարեցան... երկրպագութիւն փրկողին մերոյ՝ չարչարեցելոյն, խաչեցելոյն, թաղեցելոյն և յարուցելոյն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօր իրոյ և Հոգոյն Սրբոյ, յափտեան և յափտեանս յափտենից. ամէն<sup>27</sup>:

14. և այլն<sup>28</sup>:

## Ձեռագրագիտական և բնագրագիտական քննությունը

Առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ վերոբերյալ ձեռագրերի մեծ մասում քարոզի խորագրում հեղինակի անուն նշված չէ, և եղածները վերականգնվել են նկարագրողների կողմից: Հաջորդ առանձնահատկությունը սկսվածքներում որոշակի տարբերություններն են, որոնք, կարծում ենք՝ հիմնականում գրիչների ընդօրինակման ընթացքում պետք է որ ի հայտ եկած լինեն (օր.՝ «Կանխաձառութիւնք»-ի փոխարեն

25 ՄՄ 3830, 109ա, 122ա, հմտ. Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ներած.՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հտ. Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 1092-1093:

26 Պետք է լինի «Դ»:

27 ՄՄ 7246, 170ա, 183ա, հմտ. Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ցանկերը և համեմ. տախտ.՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հտ. Բ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1970, էջ 490: Համառոտ ձեռագրացուցակում այս «Կտակ»-ն իրավացիորեն վերագրվել է Ալեքսանդր վրդ. Ջուղայեցուն: Թեև որպես ձեռագրի գրության թվական նշված է «1741-1747 թթ.», մեզ հետաքրքրող միավորից առաջ առկա է հիշատակարան, որի շնորհիվ պարզվում է այս «Կտակ»-ի ընդօրինակման կոնկրետ ամսաթիվը. «Գրեցաւ Տեառնական կտակս ի ՌՃՂԶ. (1747) թուին և նամսեանն դեկտեմբերի ԺԷ. (15) օրն և ի Կոստանդնույպօլիս քաղաքի, ի Գէորգ արեղայէ Մանլեցոյ»։ ՄՄ 7246, 183ա:

28 Հաշվի առնելով, որ համառոտ ձեռագրացուցակներում չկան ձեռագրական միավորների սկսվածքները, իսկ «Կտակ»-ների բնագրերն այնքան էլ մեծ ծավալի չեն, բացառելի չէ սույն տարբերակի այլ ընդօրինակությունների առկայությունը Մատենադարանի ձեռագրական հավաքածուում:

«Նախաձառությունք» կամ «Կանխագիտությունք» կամ «[Կ]անխավաճառությունք»<sup>29</sup>): Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ գերակշռող դեպքերում բնագիրը սկսվում է «Կանխաձառությունք» բառով. ըստ ամենայնի, հենց սա կարող էր հեղինակային՝ հարազատ տարբերակը լինել: Բացի դրանից՝ բովանդակության առումով կարևոր է նշյալ ձեռագրերում քարոզի համար ընտրված բնաբանի<sup>30</sup> տարբերությունը. թեև քարոզի բնագրի սկսվածքը նույնն է, սակայն խորագրերում (որոնք շատ հաճախ բավականին երկարաշունչ են) որպես բնաբան ընտրվել են կան Պողոս (ձեռագրերից 6-ում, որից մեկում առաքյալի անունը չկա), կան Պետրոս (ձեռագրերից 6-ում) առաքյալների թղթերից հատվածներ՝ նրանց անվան հիշատակությամբ՝ համապատասխանաբար Ա. Պետրոս Դ. 1-ը և Ա. Կորնթ. ԺԱ. 23-26-ը<sup>31</sup>, իսկ ձեռագրերից մեկում խորագիրն ու բնաբանը չեն պահպանվել<sup>32</sup>: Այսինքն՝ այս խմբագրության՝ մեզ հայտնի 13 ձեռագրերը կարելի է խմբավորել երկուական պայմանական ենթախմբերում՝ ըստ բնաբանի և ըստ հեղինակների (ավելի ճիշտ՝ ըստ նրանց վերագրման):

Բնաբանների այս տարբերությունը, որը հետազոտության հենց սկզբում որոշակի կասկած էր հարուցել (արդյոք մեկ խմբագրության հետ գործ ունենք, թե ոչ), առիթ տվեց նախ և առաջ ուսումնասիրելու այդ երկու պայմանական խմբերին պատկանող մի քանի կարևոր ձեռագրի բովանդակությունը՝ համոզվելու. արդյոք բնագրերը նույնական, կամ տարբեր են:

29 Այս վերջին «տարընթերցումը», ինչպես տեսանք, «ծագել է» վրիպակի արդյունքում և ձեռագրում չի հանդիպել:

30 Թեև որպես «Կտակ»-ների մեծ մասի բնաբան ընտրվել է Պողոս առաքյալի՝ եբր. Թ. 15-17-ը, հեղինակային տարբերակներում այն միշտ չէ պահպանվել և փոխվել է՝ ըստ խմբագիր-հեղինակի նախընտրության. տես **Յարութիւնեան Գ.**, «Կտակ չարչարանաց»-ի ժանրի..., էջ 365:

31 Ընդօրինակություններում բնաբանը միշտ չի բառացի համապատասխանում սուրբգրային բնագրին, իսկ երբեմն էլ կրճատումներով է, որը, սակայն, արտառոց երևույթ չէ:

32 Այդ ձեռագրում (ՄՄ 2820) բացակայող խորագիրը և բնաբանը վերականգնվել են ըստ ՄՄ 1103-ի տվյալների (Պողոս առաքյալի թղթի բնաբանով):

ՄՄ 2082, 251աբ

Նոյնպէս և Աբրամ տեսնալ զխորհուրդ ատուրս, ուրախ եղև ի փրկութիւն իւր և համայնից, *քանզի զենումն Իսահակայ որդոյ իւրոյ զայն նշանակէր, զի որպէս նա ոչ խնայեաց յորդի իւր միածին և սիրելի, նոյնպէս և այսօր Հայրն երկնաւոր բազմագութ և մարդասէր ոչ խնայեաց յիւր միածին և ծոցածին որդին, այլ վասն մեր պարտաւորելոցս և մեղաւոր բնութեանս մարնեաց զնա ի մահ ըստ Եսայեայ. Տէր մարնեաց զնա առ մեղս մեր* (Ես. ԾԳ. 6):

Որպէս անդ խոյն կախեցաւ ի ծառոյն Սաբեկայ, Իսահակ արձակեցաւ, այսօր Տէր մեր կախեցաւ ի փայտէ, և Ադամ արձակեցաւ ի կապանաց. *անդ խոյն զենաւ, Իսահակ ապրեցաւ, այսօր Տէրն մեր զենաւ, և բնութիւնս ապրեցաւ ի մահուանէ:*

Անդ յայտնեցաւ զւէրն մարդոյ առ Աստուած, իսկ այսօր յայտնեցաւ զւէրն Աստուծոյ առ մարդիկք, զի իւր միածինն ետ գին և փրկանք ամենայն մարդկան: *Վասն որոյ գոհանամք և արհնենք զամէնառաւր պարզնն՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և զպարզաստուն ամենեցուն Հայրն երկնաւոր, որ յայցեալ մեզ և արար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ ի բարութիւն: Այլ և նահապեարն Յակոբ մինչ երթայր ի Խառան և եկն յերկիրն*

ՄՄ 2980, 429ա

Սոյնպէս և Աբրահամ տեսնալ զխորհուրդ ատուրս, ուրախ եղև ի փրկութիւն իւր և համայնից:

Որպէս անդ խոյն կախեցաւ ի ծառոյն Սաբեկայ, և արձակեցաւ Իսահակ, այսօր Տէր մեր կախեցաւ ի փայտէ, և Ադամ արձակեցաւ ի կապանաց:

Անդ յայտնեցաւ զւէրն մարդոյ առ Աստուած, իսկ այսօր յայտնեցաւ զւէրն Աստուծոյ առ մարդիկք, վասն զի իւր միածինն ետ գին և փրկանք ամենայն մարդկան:

ի Լուգ, որ նա ինքն է Երուսաղէմ, և եհաս ի լեառն Գողգոթայ, ուր Տէրն մեր խաչեցաւ և օթեալ անդէն զգիշերն երես տեսիլ ահեղ և զարմանալի. սանդուխտ [251թ] եղեալ յերկրէ յերկինս և Տէր ի նմա հաստատեալ, որով հրեշտակք ի յերկիր իջանէին և մարդիկք՝ ի յերկինս: Զոր զարհուրեալ Յակոբայ զարմանալով ասէր. Ահեղ իմն է տեսիլս, և զվէմն, որ կայր ի սնարս իւր էարկ իող ի վերա նորա և էօծ զնա և անուանեաց զտեղին զայն Բերթէլ՝ «այս է տուն Աստուծոյ և տուն փրկութեան», որ հանդերձեալ էր լինի, քանզի այսօր խաչն փրկական եղաւ ի գլուխ յերինն Բերթէլայ, և Տէրն համայնից հեղեալ պնդեցաւ բնեռք ի վերայ նորա, որով քակեցաւ զմիջնորմն ցանկոյն և եղև զերկուսեան մի՝ ըստ Պօղոսի. Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, զի նովաւ հրեշտակք յերկիր իջին, և մարդիկք յերկինս ելին: Քանզի այսօր Տէր մեր ի խաչին բարձրացաւ, արար խաղաղութիւն երկնաւորաց և երկրաւորաց, վասն որոյ աղաղակէր Դաւիթ. Որպես զի մեծ գործք քո Տէր, և յոյժ խոր են խորհուրդքք քո (Սղմ. ՂԱ. 6):

Ահա հիանալի գործ և խորհուրդ սքանչելի, զի Տէրն բոլորից, ուրախութիւնն Հօր, ցնծութիւն հրեշտակաց կուսածին որդին թքեալ և անարգեալ, ձաղեալ և ապտակեալ, մերկ մարմնով պրկեալ զփայտէ բազկատարած կայ ի խաչին արեամբ ճապաղեալ:

Ահա հիանալի գործ և խորհուրդ սքանչելի, զի Տէրն բոլորից, ուրախութիւնն Հօր, ցնծութիւնն հրեշտակաց, կուսածին որդին, թքեալ և անարգեալ, ձաղեալ և ապտակեալ, մերկ մարմնով՝ պրկեալ զփայտէ, բազկատարած կայ ի խաչին, արեամբ ճապաղեալ:

Նշյալ բնաբաններ ունեցող մեկական ձեռագրի՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 2082-ի (բն.՝ Ա. Կորնթ.) և ՄՄ Հ<sup>մ</sup> 2980-ի (բն.՝ Ա. Պետրոս) բնագրերի համեմատությունը ցույց տվեց, որ, չնայած նույնական սկզբնամասին և վերջնամասին, բնագրերն իրարից որոշակիորեն տարբերվում են: Մասնավորապես՝ Պետրոս առաքյալի թղթի բնաբանն ունեցող քարոզը Պողոսի՝ Կորնթացիներին ուղղված թղթի բնաբանով քարոզի որոշ չափով համառոտված ու խմբագրված տարբերակն է:

Այսպիսով՝ գործ ունենք նույն սկսվածքն ունեցող, բայց իրականում երկու խմբագրության հետ. ենթադրելի է, որ համառոտը պետք է առաջացած լինի ընդարձակի հիման վրա, ըստ այդմ՝ ավելի ուշ: Կարող ենք արձանագրել, որ այս համառոտ տարբերակին պատկանող ամենավաղ թվակիր ձեռագիրը՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 7246-ը, 1747-ով է թվագրվում (ձեռագրերի մեծ մասը՝ 18-րդ դարով, առանց ստույգ թվականի):

Ցավոք, դեռևս բավարար տվյալներ չկան՝ պարզելու, թե ում կողմից կամ կոնկրետ երբ է ստեղծվել այս խմբագրության համառոտ տարբերակը: Եթե, դիցուք, սրանցից միայն ընդարձակ տարբերակը վերագրված լիներ Ալեքսանդր Ջուղայեցուն, իսկ համառոտը՝ Ղազար Ջահկեցուն, տրամաբանական կլիներ եզրակացնելը, որ հավանական է վերջինը խմբագրել-համառոտել է նախորդի կազմած տարբերակը: Սակայն պատկերն ավելի բարդ է. երկու բնաբաններ ունեցող տարբերակներն էլ վերագրվել են Ալեքսանդր Ջուղայեցուն (իսկ Ղազար Ջահկեցուն՝ միայն ընդարձակ տարբերակի ձեռագրեր):

### **Ջուղայեցի, թե՛ Ջահկեցի. խմբագրության հեղինակի հարցը**

Այժմ անցնեք հեղինակային պատկանելության հարցին: «Կտակ չարչարանաց»-ի սույն խմբագրություն(ներ)ը, ինչպես տեսնում ենք, ձեռագրերի նկարագրություններում վերագրվել է կամ Ալեքսանդր Ա Ջուղայեցի (5 ձեռ.), կամ Ղազար Ա Ջահկեցի (2 ձեռ.) հայրապետներին (մյուս ձեռագրերում անուն չի հիշատակվում): Բնագրի հեղինակային պատկանելությունը պարզելու համար վերոբերյալ ձեռագրերից ամենակարևորը թերևս ՄՄ Հ<sup>մ</sup> 2082-ն է (Շոշ [Սպահան], 1686 թ.), բովանդակությունը՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը և Ա. Գրիգոր Նարեկացու վարքը (թ. 5-250), որն ընդօրինակել է Ալեքսանդր վարդապետը (վստահաբար՝ ապագա կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցին), իսկ թերթ 251-ից շարունակել է նրա աշակերտը՝ Աստվածատուր գրիչը՝ ընդօրինակելով Ավագ ուրբաթի քարոզը (թ. 251-64), որի խորագրում խմբագիր-հեղինակի անուն նշված չէ: Թեև գրիչ Աստվածատուրն իր միակ փոքրիկ հիշատակարանում (264ա) այս վերջին միավորի գրչությանը թվական չի հիշատակել, այն ևս իրա-

վացիորեն համաժամանակյա է համարվել Ալեքսանդր վարդապետի ընդօրինակությամբ<sup>33</sup>: Այսինքն՝ պահպանվել է առնվազն մեկ գրչագիր, որի մեջ, «Կտակ չարչարանաց»-ը խմբագիր-հեղինակի պատվերով կամ առնվազն նրա իմացությամբ է գրվել (քանի որ ձեռագրի ստացողը Ալեքսանդր վրդ. Ջուղայեցին է<sup>34</sup>): «Կտակ»-ի բնագրից անմիջապես հետո (և Աստվածատուր գրչի հիշատակարանից առաջ) առկա է խմբագիր-հեղինակի՝ Ալեքսանդր վարդապետի հիշատակարանը (264ա, ընդօրինակված Աստվածատուրի ձեռամբ<sup>35</sup>), որում նա խոսում է նաև Քրիստոսի չարչարանքներին նվիրված քարոզի ստեղծման հանգամանքների և նպատակի մասին. «Ասացաւ եւ գրեցաւ զճառս չարչարանաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տէր Աղէքսանդրէ՝ Բանի սպասաւորէ: Եւ թէ այլ գոհաբանութիւն և արհնաբանութիւն կամիցիս տալ խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, գիտ ի յայն բան քարոզին, որ ի խորհուրդ ատուրս է. *Տէր, զլուր քո լուսայ և երկեսայ*<sup>36</sup>: Քանզի և այն յիմոց թշուառ անձնէ՝ Աղէքսանդրէ է արտադրեալ ի սոյն խորհուրդ չարչարանաց, որ և նոյն խորհուրդ բացատրէ: **Իսկ այս յայն սակս արարաք, զի կարգ Անետարանին ընթացէ, եթէ այն և եթէ այս առաջի ձեր է, զորն կամիք, ասացէք** (այս և հաջորդ ընդգծումները մերն են – Գ. Հ.). եթէ հաճեսցի կամք ձեր՝ Տեառն շնորհք, և եթէ ոչ՝ մերս է պակասութիւն, ներեցէք վասն Աստուծոյ...»<sup>37</sup>: Հիշատակարանից հետևում է, որ Ալեքսանդր վարդապետն, ըստ օրվա խորհրդի, շարադրել է Քրիստոսի չարչարանքներին նվիրված Ավագ ուրբաթի այս քարոզը՝ համընթաց Ավետարանում նկարագրված իրադարձություններին, որպեսզի ընթերցողը կարողանա ընտրել՝ որն ընթերցել ըստ ցանկության: Այսպիսի ձեռագրի ու հիշատակարանի առկայությունը կարևոր, սակայն, ցավոք, ոչ հաճախ հանդիպող երևույթ է ժանրի մյուս տարբերակների դեպքում: Նշենք նաև, որ այս ընդօրինակության մեջ որպես բնաբան ընտրված է Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված Ա. թղթից հատվածը, որն արդեն վերը դիտարկեցինք, և, ինքնագիր օրինակի բացակայությամբ (գոնե մինչ այս պահը այսպիսի ձեռագիր չի հայտնաբերվել) պայմանավորված, հենց այս ձեռագրի շնորհիվ է ենթադրությունը, թե որ բնաբանն է ավելի հարազատ Ջուղայեցու գրչին<sup>38</sup>:

33 Տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. 2..., էջ 1428:

34 Տե՛ս ձեռագրի հիմնական գրչի (Ալեքսանդր վարդապետի) հիշատակարանները՝ ՄՍ 2082, 61ա, 63բ, 96ա և այլուր:

35 Ձեռագրի նկարագրության մեջ, սակայն, այն դրված է Ալեքսանդր գրչի հիշատակարանների շարքում:

36 Ամբ. Գ.2:

37 ՄՍ 2082, 264ա, հմնտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. 2..., էջ 1426:

38 Մյուս (Ա. Պետրոս) բնաբան ունեցող գրչագրերից Ալեքսանդր Ջուղայեցուն վերագրվել են 3-ը:

Կարծում ենք՝ որ հիմնվելով ՄՄ Հ<sup>տ</sup> 2082 ձեռագրի մեջբերված հիշատարականի սկզբի վրա՝ **«Ասացաւ եւ գրեցաւ** զՃառս չարչարանաց Քրիստոսի...», կարելի է ենթադրել, որ քարոզը սկզբում խոսել, ապա շարադրել է Ալեքսանդր վարդապետը: Որոշ փոփոխություններով նույն հիշատակարանը հանդիպում է նաև Ալեքսանդր վարդապետի խմբագրած «Կտակ»-ի՝ 17-րդ դարով թվագրվող մեկ այլ ընդօրինակության մեջ (ՄՄ Հ<sup>տ</sup> 1103). **«Ասացաւ և գրեցաւ** զՃառս չարչարանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, թուին ՌՃԼԵ (1686), ի տէր Աղէքսանդրէ՝ Բանի սպասաւորէ...»<sup>39</sup>: Այստեղ ավելացվել է թվականը, որն, ի դեպ, նախորդ ձեռագրի գրչության թվականն է. ՄՄ Հ<sup>տ</sup> 2082 գրչագիրն, ըստ այդմ, «Կտակ չարչարանաց»-ի այս խմբագրությունը բովանդակող հնագույն թվակիր ձեռագիրն է: Այսինքն՝ հեղինակը նախ խոսել է քարոզը Ավագ ուրբաթի առիթով, ապա գրի առել (կամ թելադրել) այն ամենայն հավանականությամբ 1686 թ. կամ դրանից ոչ շատ առաջ:

«Կտակ չարչարանաց»-ի այս խմբագրության մեկ այլ կարևոր «ենթախումբ» կարելի է համարել ՄՄ Հ<sup>տ</sup> 1103 և 1390 ձեռագրերը: Նախ և առաջ այն պատճառով, որ մինչ այս պահը միայն սրանցում է հայտնի Ալեքսանդր վրդ. Ջուղայեցու՝ «Կտակ չարչարանաց»-ի մեկ այլ խմբագրություն (Ամբակումի մարգարեությունից քաղված բնաբանով՝ ենթադրաբար գրված 1681 թ.)<sup>40</sup>, որին ցավոք հնարավոր չէ մանրամասն անդրադարձ կատարել սույն հետազոտության շրջանակում<sup>41</sup>: Արձանագրենք միայն, որ այս երկու գրչագրերում Ալեքսանդր վարդապետի մեկ «Կտակ չարչարանաց»-ի փոխարեն հաջորդաբար ընդօրինակվել են երկուսը՝ համապատասխանաբար Ամբակումի մարգարեությունից և Պողոս առաքյալի՝ Կորնթացիների Ա. թղթից ընտրված բնաբաններով. թեև ՄՄ Հ<sup>տ</sup> 1390-ում ստեղծման ժամանակագրական հակառակ հերթականությամբ: Նորից արձանագրենք, որ սրանցում ևս, ինչպես ՄՄ Հ<sup>տ</sup> 2082-ում, խնդրո առարկա «Կտակ»-ի բնաբանը Պողոս առաքյալի թղթից էր: Նշենք, որ այս ձեռագրերում ևս քարոզի խորագրում չկա Ալեքսանդր վարդապետի անունը: Ավելին, ՄՄ Հ<sup>տ</sup> 1390-ում քարոզը հետագայում վերագրվել է Ղազար Ջահկեցուն:

Անպատասխան է մնում թերևս ամենակարևոր հարցը. ինչո՞ւ կամ ինչպե՞ս են «Կտակ»-ների այս խմբագրության հիշյալ 13 ընդօրինակություններից երկուսը վերագրվել Ղազար Ա Ջահկեցուն: Դրանցից մեկը

39 ՄՄ 1103, 193ա, հմմտ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Դ..., էջ 319:

40 «Կտակ չարչարանաց»-ի այս տարբերակի խորագիրն ու սկսվածքն է՝ «Քարոզ Մեծի ուրբաթին ի բանն մարգարէին Ամբակումայ – [Տէր], զլուր քո լուայ և երկեայ, Տէր, հայեցայք ի գործս քո... Զգարհուրելի և զսարսափելի խորհուրդ կամաւոր չարչարանաց...». ՄՄ 1103, 147բ:

41 Տե՛ս **Անասյան Հ. Ա., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ. դդ.**, հտ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 584–585:

ՄՄ Հ<sup>մ</sup> 1390-ն է (Նոր Զուղա, 1686 թ. հետո), որը բովանդակում է նաև Ալեքսանդր վարդապետի՝ ավելի վաղ գրված «Կտակ»-ը, իսկ Ղազար հայրապետի անունը վերին լուսանցում ավելացվել է ավելի ուշ: Ինչպես արդեն վերը նշվեց, ձեռագրի ընդարձակ նկարագրության մեջ չի նշվել գրվածքի շարունակությունը, որը Հ. Անասյանը կարդացել է՝ «Արարեալ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի, տես 2.458, թղ. 114ա»<sup>42</sup> և նշել. «Նախկին Գեորգեան և Կարինյան ցուցակները չեն ունեցել N<sup>o</sup> 2458 ձեռագիր, իսկ այժմյան N<sup>o</sup> 2458 ձեռագրում չենք գտնում հիշյալ բնագիրը»<sup>43</sup>: Մինչդեռ կարծում ենք՝ հավելագրության մեջ «2.458»-ի փոխարեն պետք է ընթերցել «Ձ. 458». այս դեպքում բնագիրը գտնում ենք ոչ թե այժմյան Հ<sup>մ</sup> 2458 գրչագրում, այլ Էջմիածնի նախկին գրատան հիմնական հավաքածուի Հ<sup>մ</sup> 458-ում՝ ըստ հին թվի (որն էլ այժմյան ՄՄ Հ<sup>մ</sup> 420-ն է)՝<sup>44</sup>: Եվ իրոք, «Կտակ»-ի՝ Ղազար Զահկեցի հայրապետին վերագրված մյուս ընդօրինակությունը հենց ՄՄ Հ<sup>մ</sup> 420-ում է, իսկ խնդրո առարկա քարոզն այս գրչագրում սկսվում է հենց 114ա էջից: Այսպիսով, պարզ է դառնում, որ ՄՄ Հ<sup>մ</sup> 1390-ում հավելումը և Ղազար կաթողիկոսին վերագրումը արվել է՝ հիմնվելով ՄՄ Հ<sup>մ</sup> 420-ի քարոզի խորագրի վրա (նաև քարոզի նույնական սկսվածքի), ամենայն հավանականությամբ 19-րդ դարի վերջին: Գալով Ղազար հայրապետին վերագրված մյուս ընդօրինակությանը, որ տեղ է գտել ՄՄ Հ<sup>մ</sup> 420 (Էջմիածին, 18-րդ դ.) գրչագրում, կարծում ենք՝ ամենայն հավանականությամբ վերագրումն արվել է հետագայում, թեև ձեռագրի ընդարձակ նկարագրության մեջ ևս որևէ նշում այս մասին չկա<sup>45</sup>: Քարոզի խորագրի և սկսվածքի միջև ավելացված «Կտակ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց ասացեալ» նախադասությունը գրված է խորագրի գրից ավելի խոշոր բոլորգրով, կարմիրով (մինչդեռ մնացած ողջ բնագիրը սևով է): Մի հետաքրքիր փաստ է նաև այն, որ գրչագիրն ընդօրինակվել է Էջմիածնում, և ձեռագրի 1ա և 124ա էջերում առկա է կնքադրոշմ՝ «Քրիստոսի ծառայ Ղազար վարդապետ. 1203 (1754)» գրությամբ<sup>46</sup>: Մի կողմից՝ 124բ թերթը խնդրո առարկա քարոզի բնագրի սահմաններում է, սակայն մյուս կողմից՝ այն Ղազար Ա Զահկեցուն († 1751 թ.) չէր կարող պատկանել:

Բացի վերոթվարկյալից՝ Ղազար Զահկեցու տպագիր Երգարանում տեղ է գտել Ավագ ուրբաթի իրադարձություններին նվիրված մի ողբ-

42 Անասյան Հ. Ս., *Հայկական մատենագիտություն...*, էջ 585:

43 Նույն տեղում, ծնթ. 1:

44 *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հտ. Բ., էջ 1502: Այս հավաքածուի մասին մանրամասների համար տես *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հտ. Ա..., 44-47:

45 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Բ..., էջ 482:

46 Նույն տեղում:

տաղ. «Ողբ առ խաչն Քրիստոսի, նորին տեառն Ղազարու վարդապետին Ճահկեցոյ – Աստուածածինն կայր առ խաչին, ասէր՝ Յիսուս որդեակ իմ վնայ. ոսկեփետուր տատրակ իմ...»<sup>47</sup>: Այս համատեքստում հետաքրքրական է ՄՄ Հ<sup>տ</sup> 8274 գրչագիրը՝ Տաղարան (1806 թ., Ս. Կարապետ (Մուշ)), որում գրիչ-կազմողը՝ Գրիգոր քին. Կարնեցին, հավաքել է որոշակի թեմաների նվիրված տարբեր հեղինակների տաղեր<sup>48</sup>: Տաղարանում տեղ է գտել նաև Ղազար Ջահկեցի հայրապետի հեղինակած նույն տաղը. «ԺԹ. Ողբ առ խաչին Քրիստոսի, տեառն Ղազարու հայրապետին ամենայն Հայոց» խորագրով<sup>49</sup>: Այս տաղարանում ընդօրինակվել է նաև «Կտակ չարչարանաց»-ի նշանավոր կազմող-խմբագիր Հակոբ պատրիարք Նալբանի (1706–1764 թթ.) հեղինակած Քրիստոսի խաչելությանը նվիրված տաղը, որը նրա «Կտակ»-ից է. «Ի. Ողբ խաչելութեան, ի Յակոբ պատրիարզէ – Այ իմ որդեակ բաղձալի / Էր բնեռեալ կաս դու ի խաչի...»<sup>50</sup>: Բացառելի չէ, որ թեմատիկ տաղ հեղինակելու փաստը կարող էր պատճառ լինել, որ «Կտակ չարչարանաց»-ի խմբագրությունը ևս վերագրվեր Ղազար Ջահկեցուն: Դրան կարող էր նպաստել նաև այն, որ, ի թիվս այս ժանրում ստեղծագործած ժամանակի այլ նշանավոր հոգևորականների, Ղազար Ջահկեցին ևս մինչև կաթողիկոս դառնալը եղել էր նվիրակ Օսմանյան կայսրությունում (Զմյուռնիայում), եթե, իհարկե, նրան վերագրելը հատուկ միտումով չի արվել: Ենթադրելի է նաև, որ այս ժանրը Ղազար Ջահկեցու նվիրակության շրջանում պետք է որ ավելի տարածված լիներ, քան Ալեքսանդր Զուղայեցու օրերում:

### Հիմնական առանձնահատկությունները

Համառոտաբար անդրադառնանք նաև «Կտակ չարչարանաց»-ի՝ Ալեքսանդր Ա Զուղայեցու 1686 թ. խմբագրության որոշ առանձնահատկությունների:

**Ձեռագրական հիմնական առանձնահատկություն ասելով**, բացի արդեն վերը քննարկվածներից, «Կտակ»-ների ժանրի նմուշների դեպքում հասկանում ենք այն, թե ինչպիսի ձեռագրական դրսևորումներ է ստացել տվյալ միավոր-քարոզը: Ինչպես արդեն վերը տեսանք, ի տարբերություն, օրինակ, Սիմեոն Ա Երևանցի հայրապետի (1710–1780 թթ.)՝ նույնանուն քարոզի խմբագրության, որի ընդօրինակությունները

47 Գիրք նորաբոյս, որ կոչի Երզարան, շարադրեալ ի Ղազարու Վարդապետէ, ի փառս մօր մերոյ Սրբոյն Էջմիածնի, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, 1737, էջ 73–74:

48 Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ..., էջ 711:

49 ՄՄ 8274, 29 ա, բ:

50 Նույն տեղում, 29բ–30ա:

գերազանցապես տեղ էին գտել նրա Քարոզգրքում<sup>51</sup>, Ալեքսանդր հայրապետի խմբագրածը մեզ է հասել բացառապես ժողովածուներում կամ արտագրվել որևէ երկի (ձեռագրի հիմնական միավորի) ընդօրինակությունից հետո: Ալեքսանդր Ա Ջուղայեցու անունով պահպանված որևէ քարոզգիրք մեզ հայտնի չէ, որտեղ ենթադրաբար կարող էր տեղ գտնել նաև ավագուրբաթյա այս քարոզը: Ինչպես տեսանք, պայմանական «ենթախումբ» կազմող ՄՄ Հ<sup>մ</sup> 1103 և 1390 գրչագրերում էլ միասին ընդօրինակվել են հեղինակի խմբագրած ընդամենը երկու քարոզ՝ երկու «Կտակ»-ները: Նմանանատիպ պատկեր ենք տեսնում նաև ՄՄ Հ<sup>մ</sup> 7246-ում, որում հաջորդաբար ընդօրինակվել են Հակոբ պատրիարք Նալլանին վերագրվող<sup>52</sup> և Ալեքսանդր Ջուղայեցի հայրապետի՝ մեզ հետաքրքրող «Կտակ»-ները<sup>53</sup>, ընդ որում՝ երկուսի խորագրում էլ որևէ հեղինակի անուն չկա:

«Կտակ չարչարանաց»-ի ժանրի քարոզները, որքան էլ որ կազմվել-խմբագրվել են հիմնականում նույն կաղապարով՝ պահելով նույնական սյուժեն, ոճը, գործող զխավոր կերպարներին և այլն, այնուամենայնիվ կարող են տարբերվել, օրինակ, **կառուցվածքով**: Կարող ենք արձանագրել, որ սույն քարոզը, ի տարբերություն ժանրի՝ ավելի ուշ շրջանում ստեղծված այլ նմուշների, միայն արձակ է: Կարծում ենք՝ սա ևս ցույց է տալիս «անցումային» այն գործընթացը, որի արդյունքում «տաթևացիական» (կամ վերջինի հիմքում ընկած «նախնական») տիպից (որում չափածո հատվածները բացակայում են) ավագուրբաթյա այս քարոզների կաղապարը 18-րդ դարում արդեն մեծ մասամբ դարձել է արձակ և չափածո՝ խառը կառուցվածքով: Մյուսիսին են, օրինակ, «Կտակ»-ների՝ Սիմեոն եպս. Երևանցու և Ստեփանոս սրկ. Տփղիսեցու (18-19-րդ դդ.) տարբերակները:

## Եզրակացություն

Ամփոփելով «Կտակ չարչարանաց»-ի խնդրո առարկա խմբագրությանը նվիրված հետազոտությունը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

ա. «Կտակ չարչարանաց»-ի այս խմբագրության ոչ մի ընդօրինակության մեջ քարոզի խորագրում չի հանդիպում հեղինակի անունը՝ գրված հենց գրչի կողմից:

51 Այս խմբագրության մասին մանրամասն տես **Հարությունյան Գ. Ա.**, «Կտակ չարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի..., էջ 133-149:

52 «Կտակ Մեծի ուրբաթի սգոյն, նորագոյն շարադրեցեալ – Ո՛վ օր դառնութեան և սգոյ, ով գիշեր կսկծալի և ողբալի, ով ժամ և ժամանակ տարակուսանաց և մորմոքման...». ՄՄ 7246, 141ա-69ա:

53 Այսպիսի դեպքերը եզակի չեն, այլ ձեռագրերում ևս հնարավոր է հանդիպել երկու կամ ավելի թվով «Կտակ չարչարանաց»-ի բնագրերի, անգամ՝ «Կտակ»-ժողովածուների:

բ. Իրականում գործ ունենք մի խմբագրության և դրա համառոտված տարբերակի, կարելի է ասել՝ նույնիսկ երկու խմբագրությունների հետ. վերջինի հետ կապված հավելյալ տեղեկություններ այս պահին չկան, կարելի է թվագրել դրա առաջացումը 18-րդ դարով (1747թ.-ից ոչ ուշ):

գ. Կարելի է հաստատապես պնդել, որ ապագա կաթողիկոս Ալեքսանդր վրդ. Զուդայեցին կազմել-խմբագրել է ոչ թե մեկ, այլ «Կտակ չարչարանաց»-ի առնվազն երկու տարբերակ՝ 1681 և մոտ 1686 թթ.: Առաջինի հեղինակային պատկանելության վերաբերյալ կասկած չի եղել, իսկ երկրորդը խնդրո առարկա խմբագրությունն է (ընդարձակ տարբերակը), որի հեղինակային պատկանելության հարցը ևս հաստատված կարելի է համարել: Ալեքսանդր վարդապետի կողմից այդ քարոզը խոսվել և գրի է առնվել 1686 թ.-ից ոչ ուշ, ամենայն հավանականությամբ Նոր Զուդայում:

դ. Ղազար Ա Զահեցի հայրապետին վերագրվել է այս խմբագրության՝ 18-րդ դարով թվագրվող երկու ընդօրինակություն (երկու դեպքում էլ՝ ընդարձակ տարբերակը): Կարծում ենք՝ երկու դեպքում էլ նրա անունը գրչագրերում ավելացվել է հետագայում: Եվ որևէ ուղղակի կամ անուղղակի վկայություն, որ նա առհասարակ հեղինակել է «Կտակ չարչարանաց»-ի սեփական տարբերակը, առայժմ չկա:

## THE PROBLEM OF THE AUTHOR OF A RECENSION OF THE “TESTAMENT OF PASSION” ATTRIBUTED TO CATHOLICOI ALEK’SANDR JUGHAYETS’I AND GHAZAR JAHKETS’I

**Garnik Harutyunyan**

*PhD in History*

*Matenadaran after Mesrop Mashtots*

*Yerevan State University*

### **Abstract**

The present article discusses the authorship and dating of an early recension of the genre of “Testaments”. These sermons concerning the events of Good Friday became popular in the second half of the 17<sup>th</sup> century.

The recension in question was primarily copied in miscellanies. Matenadaran houses 13 manuscripts containing this sermon. In the majority of these manuscripts, the sermon is anonymous: there is no mention of the author in the titles. In other manuscripts, however, this recension of the “Testament of Passion [of Christ]” has been attributed to two catholicoi, Alek’sandr I Jughayets’i (1706–1714) and Ghazar I Jahkets’i (1737–1751): in manuscript catalogues, it has been attributed to both of them, though more often to Alek’sandr Jughayets’i rather than to Ghazar Jahkets’i.

The article shows that in reality, we deal with a recension and its shortened version. The author of the recension is *Vardapet* (Archimandrite) Alek’sandr Jughayets’i, and the composition date is around 1686. Interestingly, this recension is written in prose only and does not have a mixed verse and prose structure typical of the majority of recensions of “Testaments” composed between the 18<sup>th</sup> and 19<sup>th</sup> centuries.

**Keywords:** Testament of Passion, Good Friday, sermon, Alek’sandr Jughayets’i, Ghazar Jahkets’i, New Julfa, manuscript

## ПРОБЛЕМА АВТОРА ОДНОЙ РЕДАКЦИИ «ЗАВЕЩАНИЯ СТРАСТЕЙ», ПРИПИСАННОЙ КАТОЛИКОСАМ АЛЕКСАНДРУ ДЖУГАЕЦИ И ЛАЗАРЮ ДЖАХКЕЦИ

**Гарник Арутюнян**

*канд. истор. наук*

*Матенадаран имени Месропа Маштоца  
Ереванский государственный университет*

### Резюме

Настоящая статья посвящена проблеме авторства и датировке одной из ранних редакций жанра «Завещания страстей [Христовых]». Эти проповеди, посвященные событиям Страстной пятницы, стали популярными начиная с середины XVII века.

Интересующая нас редакция в основном была скопирована в так называемых сборниках, и тринадцать рукописей Матенадарана также содержат эту проповедь. В большинстве рукописей эта проповедь анонимна, то есть в заглавии нет упоминания автора. Но в остальных рукописях это «Завещания страстей» приписано двум католикосам – Александру I Джугаеци (1706–1714 гг.) и Лазарю (Газару) I Джахкеци (1737–1751 гг.). В каталогах рукописей эта редакция также была приписана обоим деятелям, причем больше Александру Джугаеци, чем Лазарю Джахкеци.

В статье показано, что на самом деле мы имеем дело с одной редакцией жанра «Завещание страстей» в ее укороченном варианте. Автором редакции является в то время еще «вардапет» (архимандрит) Александр Джугаеци, а время создания по всей вероятности 1686 г. Интересно, что данная редакция составлена в прозе и этим отличается от большинства вариантов «Завещания страстей» XVIII–XIX веков, которые имеют смешанную структуру – в прозе и в стихах.

**Ключевые слова:** Завещание страстей, Страстная пятница, проповедь, Александр Джугаеци, Лазарь (Газар) Джахкеци, Новая Джуга (Джюльфа), рукопись

## Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Ձեռագրեր՝ ՄՄ Հ<sup>մր</sup> 420, 1103, 1390, 1755, 1842, 2082, 2269, 2715, 2820, 2980, 3304, 3830, 7246, 8274:
2. **Անասյան Հ. Ս.,** *Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ. դդ.*, հտ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:
3. *Գիրք նորաբոյս, որ կոչի Երզարան*, շարադրեալ ի **Ղազարու Վարդապետէ**, ի փառս մօր մերոյ Սրբոյն Էջմիածնի, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցոյ, 1737:
4. **Հարությունյան Գ.**, Ստեփանոս սարկավագ Տփղիսեցոյ (Թիֆլիզեցոյ) «Կտակ սուրբ չարչարանացն Քրիստոսի փրկչին մերոյ» երկը և «Կտակ չարչարանաց...»-ի ժանրը, *Սկադեմիկոս Սեն Արևշարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր (22-23 մայիս, 2019 թ.)*, Երևան, Մատենադարանի հրատ., 2020, էջ 218-231:
5. **Հարությունյան Գ. Ա.**, «Կտակ չարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի քարոզի՝ Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը, *Բանբեր Մատենադարանի*, 33, Երևան, 2022, էջ 133-149:
6. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, խմբ.՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դերիկեանի), հտ. Բ., Երևան, «Նաիրի» հրատ., 2004:
7. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, խմբ.՝ Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմ.՝ Վ. Դերիկեանը), հտ. Դ., Երևան, «Նաիրի» հրատ., ԵՊՀ հրատ., 2008:
8. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Օ. Եգանեան, խմբ.՝ Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմ.՝ Վ. Դերիկեանը), հտ. Ե., Երևան, «Նաիրի» հրատ., ԵՊՀ հրատ., 2009:
9. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Զ., Երևան, «Նաիրի» հրատ., 2012:
10. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Է., Երևան, «Նաիրի» հրատ., 2012:

11. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Թ., Երևան, «Նայիրի» հրատ., 2017:
12. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի), հտ. Ժ., Երևան, 2019:
13. **Յարութիւնեան Գ.**, «Կտակ չարչարանաց»-ի ժանրի ձեռագրական եւ բնագրային հիմնական առանձնայատկութիւնները, «Մին», 2023, Օգոստոս-Դեկտեմբեր, թիւ 8-12, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, էջ 359-367:
14. *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի* (կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ներած.՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հտ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:
15. *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի* (կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ցանկերը և համեմ. տախտ.՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի), հտ. Բ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1970:

Ընդունվել է՝ 02.04.2024

Գրախոսվել է՝ 11.04.2024

Հանձնվել է տպ.՝ 03.10.2024